ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ույուտ Սենթր ՍՊԸ-ն ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ցուցափեղկ պահարան (այսուհետ՝ Պահարան) Պահարան՝ պատրաստված հացենու փայտից (այսուհետ՝ փայտ), հացենու շպոնապատ ԴՎՊ-ից (այսուհետ՝ ԴՎՊ), ՄԴՖ-ից՝ եզրապատված հացենու շպոնով (այսուհետ՝ ՄԴՖ), և ապակուց: Չափսերը՝ բարձրությունը՝ 2200մմ, երկարությունը՝ 1260մմ, լայնությունը՝ 450մմ: Պահարանը բաղկացած է 2 մասից: Վերին հատվածը՝ երկփեղկանի, 2 հավասարաչափ փեղկերից: Փեղկերը կազմված են 4մմ հաստությամբ ապակուց, 4 կողմերից 70մմ լայնությամբ, 18մմ հաստությամբ ՄԴՖ՝ ապակու հետ հատման մասի վրա կատարված եզրային նախշազարդ՝ ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ, իսկ ապակու եզրային մասերը (ներսի կողմից) դեկորատիվ պարանով փաթաթված: Դռները ամրացվում են 4-ական ներքին ծխնիով, բռնակը մետաղյա, հնաոճ: Պահարանի կողային հատվածները նույնպես ապակեպատ, 70մմ լայնությամբ և 18մմ հաստությամբ ՄԴՖ շրջանակով, ապակու հետ հատման մասի վրա կատարված եզրային նախշազարդ՝ ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ, իսկ ապակու եզրային մասերը դեկորատիվ պարանով փաթաթված: Պահարանը կազմված է 5 հորիզոնական դարակաշարից, դարակաշարերը 8մմ հաստությամբ մշակված և փայլեցված ապակուց: Պահարանի երեսի մասը ծածկված ՄԴՖ-ով, կողային և դիմային եզրային հատվածները դեպի դուրս թեքությամբ աստիճանական բարձրացող փայտով՝ տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ, դիմային վերին հատվածը ձևավոր փայտով՝ ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պահարանի ներքևի հատվածը կազմված է 2 զուգահեռ քաշովի հավասարաչափ 150մմ բարձրությամբ դարակներից: Պահարանի ներքևի հատվածի կողային մասերը փակված ՄԴՖ-ով, չափսերը՝ 200Х450մմ: Պահարանի տակը ամբողջությամբ փակվում է 18մմ հաստությամբ

	ՄԴՖ-ով, եզրապատված 20Х20մմ չափի փայտով: Պահարանի տակը փայտից ներկառուցված ձևավոր ոտքերով՝ հաստությունը՝ 45Х45մմ, բարձրությունը՝ 160մմ, ոտքերը իրար միանում են ձևավոր փայտով, ձևավորումը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պահարանը հետևի կողմից փակված 4մմ հաստությամբ ԴՎՊ-ով: ՄԴՖ-ի եզրերը ամրացվում են 1մմ հաստությամբ բնական փայտի եզրաժապավենով: Պահարանի գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

УЮТ СЕНТР ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԳԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	